ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 13.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 գնման պայմանագրում 29.02.2024թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշում:
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5, 8.14 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
13.03.2023թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 գնման պայմանագրի

ք. Երևան 29.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԿԻՐ-ՔԱՐ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս տնօրեն Ա. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 28.12.2023թ. N 2323-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 13.03.2023թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Հաստատել Պայմանագրի 2024 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

1.1.2 Համաձայնագրով նախատեսված գումարի շրջանակներում աշխատանքներն իրականացնել Պայմանագրի N2 հավելվածով հաստատված օրացուցային գրաֆիկին համապատասխան:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047249
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Կորի 33 փ. տ 11
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122205831002
ՀՎՀՀ 05543213
Տնօրեն՝

Ա. Ադամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
13.03.2023թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 գնման պայմանագրի
23 . 02 .2024թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	2023թ. վճարված գումար	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
45221142/4	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ	265 799 284	-	93 029 700	93 029 700	186 059 500	186 059 500	186 059 500	434 138 800	434 138 800	434 138 800	620 198 300	620 198 300	620 198 300	620 198 300

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047249
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Լ. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ ք. Գյումրի Կորի 33 փ. տ 11
«Ինեկոբանկ» ՓԲԸ Գյումրի մ/ճ
Հ/Հ 2050122205831002
ՀՎՀՀ 05543213

Տնօրեն՝

_____ Ա. Վրամյան
(ստորագրություն)
Կ.Տ.

INECOBANK

16.02.2024թ. № G 1012

ԵՐԱՇԽԻՔ N EA24/00089
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում ԿԻՐ-ՔԱՐ ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրով և կնքվելիք Համաձայնագիր N 2-ով /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 186,125,932.00 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր երեսուներկու) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև 30/06/2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԳՅՈՒՄՐԻ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ **ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մանյա Բաղդասարյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5945)

INECOBANK

16.02.2024թ. N G 1011

ԵՐԱՇԽԻՔ N EA24/00088
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և ԿԻՐ-ՔԱՐ ՍՊԸ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրից և կնքվելիք Համաձայնագիր N 2-ից /այսուհետ միասին՝ Պայմանագիր/ բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 15,274,590.00 (տասնհինգ միլիոն երկու հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է մինչև 31/05/2026թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-22/13 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

<<ԻՆԵԿՈԲԱՆԿ>> ՓԲԸ
<<ԳՅՈՒՄՐԻ>> Մ/Ճ ԿԱՌԱՎԱՐԻՉ **ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆ**

Կատարող՝ Մանյա Բաղդասարյան
Ստորաբաժանում՝ ՎՀԲ
Հեռ.՝ +374 10 510510 (5447)